<<Իսկական բարեկամությունը տարիների փորձություն ունի. . . >> հայ-իտալական մանկավարժական-նորարարական միջմշակութային ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագիրը

2018 թվականից սկսած Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմն. դպրոցը համագործակցում է Լոմբարդիայի մի շարք դպրոցների հետ
(-Istituto Comprensivo di Bellano:- scuola primaria di Lierna (LC), - scuola secondaria di primo grado di Bellano e Lierna (LC), - Istituto Comprensivo "Don Ticozzi" - Lecco 2, - scuola primaria "Silvio Pellico" – Lecco, - Istituto Comprensivo di Cremeno (LC), - scuola secondaria di primo grado di Introbio (LC)) .

1. Անգլերենի՝ միջհաղորդակցական հնարավորությունների և տեղեկատվահաղորդակացական միջոցների լայն կիրառում, սկզբից նամակագրության, իսկ հետո նաև հեռավար առցանց դասերի միջոցով,
2. կրթական ոլորտի ներկայացուցիչների համագործակցություն և երկուստեք այցելություններ

Ծրագրի նպատակները

ժամանակակից հեռահաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կրթական և միջմշակութային համագործակցության իրականացում Լեկոյի և Վանաձորի դպրոցների միջև՝

1. Հեռավար դասերի կազմակերպում ,
2. սկզբնական շրջանում անգլերենին տիրապետող ուսուցիչների աջակցությամբ մանկավարժական փորձի փոխանակում, իսկ հետագայում նաև դպրոցում իտալերեն լեզվի ուսուցման արդյունքում միջմշակութային կապերի հաստատում,
3. դպրոցում արտադասարանային խմբակի հիմնում՝ «Իտալիայի մշակույթը և լեզուն» դասընթացի իրականացում 5-9-րդ դասարանցիների համար,
4. Վանաձորի և Լեկոյի համայնքների միջև բարեկամական կապերի հաստատում:

Ծրագրի խնդիրները

1. Բարձրացնել անգլերենի իմացությունը ,
2. ուսուցանել իտալերեն լեզուն և գիտելիքներ հաղորդել Իտալիայի մշակույթի մասին,
3. զարգացնել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հմտությունները,
4. նպաստել գիտելիքների ամրապնդմանը 2 երկրների մշակույթի, պատմության, աշխարհագրության, քաղաքակրթության և ավանդույթների մասին,
5. խրախուսել հեռավար դասերի կազմակերպումը,
6. նպաստել երեխաների՝ անկաշկանդ օտար լեզվով արտահայտվելուն:

Հայ-իտալական բարեկամության պտուղները

Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմն. դպրոց իտալացիների առաջին այցելությունը կայացավ 2018թ. հունիսի 21-ին: Տեսանյութ՝ «Ֆորտունա>» մարզային հեռուստաընկերության անդրադարձը:

Տեսանյութ `

մեր աշակերտների `իտալերենով ողջույնը

Սահիկաշարի տեսքով շնորհանդես երկու երկրների վերաբերյալ։
Սահիկաշարի հղումը:
Տեսանյութ՝ մեր աշակերտների ողջույնը:

Տեսանյութեր՝ մեր աշակերտների կողմից ներկայացվող հայկական մշակույթի և ավանդույթների մասին:

https://www.youtube.com/watch?v=h8RobrYGOZI

https://www.youtube.com/watch?v=ulLUgdhJNIU

FRIENDSHIP

Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմն. դպրոց իտալացի մեր բարեկամների երկրորդ այցելությունը կայացավ 2018թ. օգոստոսին, իսկ հաջորդը՝ սեպտեմբերին:

Մեր աշակերտները ներկայացնում են երկու երկրների ազգային խորհրդանիշներով՝ դրոշներով պար:

Տեսանյութ դպրոցի հարթակներից մեկում ազգագրագետ , փայտագործ, արվեստագետ Սուսաննա Օհանյանի և դպրոցի շնորհալի աշակերների ձեռքով պատրաստված ցուցանմուշների ներկայացման վերաբերյալ:

Տեսանյութեր՝ մեր դպրոցի շրջանավարտ վաստակավոր ասմունքող Ջիվան Սարգսյանի կատարմամբ (հայերեն և իտալերեն լեզուներով ասմունք):

https://www.youtube.com/watch?v=g4DCOcgXi20

https://www.youtube.com/watch?v=cbZlXgBt1BA

ԴՊՐՈՑԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

Պաշտոնական հանդիպում Վանաձորի քաղաքային իշխանությունների և Լեկոյից ժամանած պատվիրակության հետ: Քննարկվեցին կրթական ծրագրի դրույթները :

Դպրոցի 2-րդ դասարանի աշակերտ Արամ Խաչինյանի՝ իտալերենով շնորհակալական խոսքը Լեկո քաղաքի բնակիչներին:
https://www.youtube.com/watch?v=p_IDRzvV0Ag

Նամակագրության հաստատում երկու երկրների աշակերտների և ուսուցիչների միջև



LAGO DI COMO
with links to the digital map
Map of Lake Como
Over 1000 tourist attractions and locations to be discovered
Mappa del Lago di Como
Oltre 1000 punti di attrazione e luoghi da scoprire
con collegamenti alla Mappa digitale
LAGO DI COMO
ITALIA
UN MONDO UNICO AL MONDO
Mandello del Lario
Lago di Como - Lake Como
WEEKEND MANZONIANO
1 notte
+
Tour Manzoniano
FOR OUR FRIENDS FROM VANAZDOR
Our School in Bellano
21/02/20 Bellano
Sara
Mattia G.
Diego
Magda
Vanessa
Mirco
Fedelriccio
Angelo
Paolo
Nicholas
Paolo
Angelo
Lorenzo
Isabel
Giulia
NOEMI

SPRING
HAS
COME

ITALIA
ARMENIA

CGIL
SPI
SPI CGIL
lombardia

Հեռավար դասի կազմակերպում

Վանաձորի թիվ 19 դպրոցի և Բելանոյի դպրոցի միջև

Դասը կազմակերպվեց 2019 թ. դեկտեմբերի 16-ին: Այն նվիրված էր երկու երկրների ազգային երաժշտական գործիքներին: Հանդիպման համար կիրառվել էր Google Meet ծրագիրը: Տեսանյութ՝ դասի ընթացքում երկու երկրների դպրոցների աշակերտների կատարմամբ:

3UB 19-20 ENGLISH
meet.google.com/vvo-ieqar-jse?pli=1&authuser=0
vanadzor19 Vanadzor Basic School #19

Դասի պլանը
https://docs.google.com/document/d/16WvcAQDLwULSG5rcyCh49PtUDMmpUvya/edit

Բելանոյի դպրոցի կողմից ներկայացված իտալական ազգային գործիքը
https://drive.google.com/file/d/1vyoTxff7U5oIZdKscth2eDUiSNo6Q15I/view?usp=sharing

Տեսանյութ՝ դասի ընթացքում Վանաձորի թիվ 19 դպրոցի աշակերտուհի Վարդուհի Հովհաննիսյանի կատարումը
https://youtu.be/yrgPYbA68P0

Սահիկաշար՝ հեռավար դասին Վանաձորի թիվ 19 դպրոցի կողմից ներկայացված նյութը:



ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՆԱՁՈՐԻ
ԲԱՑԱՌԻՐ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 19
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
1963

Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19հիմն. դպրոցի մանկավարժական խմբի այցելությունը Լեկո

Կայացավ պաշտոնական հանդիպում Լեկոյի նախկին քաղաքպետ Վ. Բրիվոյի հետ: Քաղաքապետարանում քննարկվեցին հայ-իտալական կրթական ծրագրի ձեռքբերումները ու հեռանկարները, ինչպես նաև հնչեցին առաջարկներ երկու երկրների փոխշահավետ շփումների վերաբերյալ:

Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմն. դպրոցի տնօրեն Ա. Եդոյանը հարցազրույց տվեց Լեկոյի ՀԼՄ-ներին:
Լեկոյի https://www.leccoonline.com/ առցանց պարբերականի անդրադարձը մեր այցելությանը Լեկո:
Հղումն այստեղ:

Ծրագրի վերջնարդյունքները և շարունակականությունը

1. Սերտ համագործակցային կապերի հաստատում Վանաձորի թիվ 19 դպրոցի և Իտալիայի Լոմբարդիա նահանգի դպրոցների մանկավարժների և աշակերտների միջև,
2. նամագրության հաստատում և հեռավար դասերի իրականացում. փորձի փոխանակում, երկու երկրների մշակույթի ներկայացում, աշակերտների մոտ անգլերենի և անկաշկանդ խոսքի զարգացում,
3. ծրագրի ներկայացում քաղաքային իշխանություններին,
4. երկու երկրների մանկավարժների փոխադարձ այցելություններ,
5. Վանաձորի Ռաֆֆու անվ. թիվ 19 հիմն. դպրոցում «Իտալիայի մշակույթը և լեզուն» դասընթացի իրականացման նախադրյաներ,
6. ծրագրի շարունակականություն. ծրագրի մեջ ներգրավել նաև Լոռու մարզի այլ դպրոցների ուսուցիչներին և աշակերտներին:

ITALY
ARMENIA
LECCO
VANADZOR